ՀՀ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ Ֆ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Սրտանց շնորհավորում եմ Ձեր ծննդյան 80-րդ տարեդարձը:

Իբրև հասարակական և պետական գործիչ, Դուք Ձեր արժանի ավանդն ունեք մեր երկրի զարգացման գործում:

Մեծ են Ձեր ծառայությունները Հայաստանի գիտության զարգացման բնագավառում: Դուք, երկար տարիներ գլխավորելով Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը, նշանակալի ավանդ եք ներդրել ռադիոէլեկտրոնային արդյունաբերության զարգացում:

Անուրանալի է նաև Ձեր վաստակը Հայաստանի անտեսության առաջընթացում, մասնավորապես՝ Հայաստանի Մինիստրների խորհուրդը ղեկավարելու տարիներին:

Այսօր Գիտությունների ազգային ակադեմիան, ի դեմս Ձեզ, ունի փորձառու և գործուն ղեկավար, գիտական առաջընթացի գործի նվիրյալ:

Շնորհավորելով հոբելյանի առթիվ՝ մաղթում եմ Ձեզ երկար կյանք, քաջառողջություն և նորանոր հաջողություններ Ձեր բարձր առաքելության մեջ:

ՌՈՒԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ
ՀՀ Նախագահ